



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn

✓ 1824

1999

Հ. Կ. Ա. Լ. Ե. Բ. Գ. Ծ. Ծ. Ծ.



6981

Մ Ե Տ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն



Գ 1824-60

28 1830



U.S. SUPPLY



Մ Ե Տ Ն Ո Ի Թ Է Է Ն



Ե.

Ես ՚ի տան սիրելւոց իմոց վերաւորեցոյ :

Եզգին առջեւ՝

Ենհաւանտ .

Տէրու թեան առջեւ՝

Եպստանք .

Յեղափոխականն .

Տէրու թեան մէջ տէրու թիւն կանգնող

Հոս՝ ու թանամեայ եղիտկոպոս մը երեք անգամ պատրիարքու թիւն ըրած ու մեզի հետ մէկ տեղ յետադէմ կողմէն երեք անգամ թուքու մուր կերած՝ իր ալիքը մտքրելու համար մեր պառիսն աղտոտելու դիտաւ որու թեամբ, պինդ երեսով ու անդ ուռն բերնով բեմին բարձրէն ժողովուրդին կ'աղաւ

ղակէ թէ, «անհաւանտ ու ազգատեանց
են լուսաւորեալները, որոնց բարեւ
անգամ պէտք չ'է տալ»:

Հոն՝ Ազգին պատրիարքը, որ Աս-
տուծմէ ու Տէրութենէն պաշտօն ա-
ռած է Ազգն ՚ի խաղաղութեան պա-
հելու, որ իր թշնամիները սիրելու,
հալածիչները պաշտպանելու և անի-
ծիչներն օրհնելու պատուէրն առած է
Քրիստոսէ, երեք անգամ ժողովուր-
դին մօրուքին կը խնդայ, անոր երես-
ները կը շպէ և ետքը կ'երթայ իշխա-
նութեան առջեւ կ'ամբաստանէ նոյն
ժողովուրդը իբրեւ ապստամբ, իբրեւ
յեղափոխական, իբրեւ Տէրութեան
մէջ տէրութիւն կանգնող:

Եւ ամեն տեղ ուր որ հասարակ, աւ-
ստամբալի ու ջերմեամբ մարդ մը կայ,
ձեռքերն իրարու կը շփէ ու առտուն
կանուխ և միջօրէին և իրկուան ժա-
մուն և կէս գիշերին եկեղեցին կ'եր-
թայ, փանք տալու Արարչին, և նե-
րող գլխած ու մարդասէր Աստուծուն
առջեւ իր վրէժխնդիր, անգութ և
մարդաստեաց սիրտը իբրեւ օթոց տա-

րածելու և Անոր օրհնութիւնն ու ու
ղորմութիւնը հայցելու իր և իր զաւ-
կրներուն գլխուն վրայ :

Եւ ասա գահգահի աղաղակները
կը փրթի Իւսկիւտարէն Պէշիկթաշ,
Քուզկունճուքէն մինչեւ Եյուսյ,
Գոււմգաբու և Իճատիէ ձեռք ձեռքի
կուտան ու արեղաթողի աօնը կը կա-
տարեն :

Եւ հարիւրաւոր հոգի Պրոպատի-
կէի աւազանին մէջ դեռ նոր իրենց
բժշկութիւնը գտած՝ Ժալոնաները կը
լցվին և Հիւնէար-Իսկիւթիի գիմացի ե-
զերքը կ'երթան, ծովէն հեռու, բնա-
կութենէ հեռու, ամացի դաշտին վը-
րայ խոտաճարակ հացկերոյթ ընելու :

Ամեն տեղ իսիլիստի, ախարի, բան-
աարի-իւն բառերը կը լավին և քիչ
մ'ալ ևս և ասա բոլոր լուսաւորեալ
կողմը, այսինքն՝ ով որ Փռանսերէն գի-
տէ, ով որ կարգալ գրել գիտէ, ով որ
աշխարհաբառ կը գրէ, ով որ քիչ մը
մաքուր և պարկեշտ կը խօսի, ով որ

կայր հաւատք չ'ունի, միահամուռ տա-
րադրութեան կը դատապարտվի :

Ո՛վ սարսափելի վայրկեան, ահա ե-
լի գեշեր :

Այն կողմն, որ ինքզինքը խաւար-
եալ կը կոչէ, Յովսափաթու ձորին
մէջ և ձիթենեաց սարսափին մէջ
իր յաղթութեան արիւնաներկ դրոշ-
շակը կը կանգնէ և քանի որ անի ծա-
ծանի, մեր ազգասէր ու աստուածա-
վորս խաւ արեալներուն սիրտը կը պա-
ղըշկի

Տեսէք. ի՛նչպէս իրենց յաղթու-
թեան կառքերը եղեռնական ճամբուն
վրայ իրենց ազգակից և կրօնակից եղ-
բայրը դիակները կոխկռտելով կ'անց-
նին :

Կեցցե՛ն խաւարեալք ,

Կեցցե՛ Արշալոյս ,

Կեցցե՛ Երեւակ ,

Եւ սա մեր դուռներուն առջև
հաջող երկոտանին .

Սեղու ,

Միւնասի ,

Ծաղիկ և

Միութիւն

Սանդարամեան իջէք դուք :

Եւ ըսին . մեր փափաքները կատարվեցան , մեր յոյսերը ստակվեցան , տեսան մեր զօրութիւնը և սասանեցան . ո՞վ ասկէ ետքը պիտի յանդգնի մեզի դէմ ելնել

Բ.

Տեսի ես զամբարիշտն վերացեալ բարձրացեալ որպէս զմայրոն լիբանանու . անցի և ահա ոչ էր . խնդրեցի և ահա ոչ գտաւ տեղի նորա :

ՍԱՂՄՈՍ

Իրենց ատելութիւնը գոհացնելու համար առաջ կը բերեն այն կայսեր օգուտը որուն իշխանութիւնը իրենց գարշելի է :

ԼԱՄՆԵ

Ի՞նչ կարծեցիք անդգամներ . Ռուսիոյ հողին վրայ չ'ենք : Հոս անանկ մարդը բռնեւնուն պէս 'ի բանա չ'են մատներ , աքսոր չ'են զրկեր և ազատա միտներու համար Սիպերիա չ'ունի Օս

մանեան Տէրութիւնը : Եւ ի՛նչու ու
 նենայ . Հոս՝ անոնք միայն հաւատա-
 րիմ են Տէրութեան , որ նոր դարուս
 սկզբունքներուն կը ծառայեն . զի նոյն
 իսկ Եւրոպայի մէջ ալ քիչ կայ նման
 Օսմանեան հողին ուր այսքան համար
 ձակութիւն և այսքան թոյլաուութիւն
 չնորհված ըլլայ : Հոս յառաջդիմու-
 թեան յեղափոխութիւն չ'են ըսեր և
 ոչ ալ ազատամտութեան անհաւատու-
 թիւն կ'ըսեն : Հոս՝ կրօնամոլներն են
 միայն Տէրութեան թշնամի , զի իրենց
 կրօնքէն չ'եղալները , ով ալ ըլլան , կը
 հալածեն իբրեւ սրբի գժոխոց : Արօ-
 նամու հայր իրեն վարձք կը սեպէ Տաճ-
 կին ստակը գողնալ , Տաճիկը խաբել ,
 Տաճկին ստանը փրկիլ . մինչդեռ լու-
 սաւորեալ հայ մը ոչ առաքիլութիւն
 և ոչ մեղք մը գործած ստանը գխտ
 ազդ կամ կրօնք խաբել :

Ահա դուք այս պարագային մէջն
 ալ Տէրութիւնը խաբելու ելլաք և Ալ-
 քը մաանեցիք՝ վասն ամենաժծ փառացի
 Աստուծոյ : Բայց ի՛նչ անցաւ ձեռքեր
 նիդ : — Ես ըսեմ ձեզի : Սահմանադրու-

Թիւնը մատնել կարծեցիք և ամենէն
 առաջ դուք զձեզ մատնեցիք . զի ձեր
 ստորագրութիւնները կային Սահմանադրութեան ներքեւ : Եւ որ աւելի
 մեծն է , ձեր մատնութեամբն ամենքն
 իմացան թէ ինչ պատճառներու հա-
 մար շինվեր է Սահմանադրութիւնը ,
 որ իշխանութիւնը ձեր ձեռքէն ելնէ
 ու ընդհանրութեան ձեռքն անցնի .
 վասն զի ձեր դիտաւորութիւնները
 մնասակար են եղեր Ազգին ընդհանրու-
 թեանը . վասն զի Օսմանեան կառա-
 վարութեան օգտին ալ շահաւոր չ'են
 եղեր . վասն զի այդ դիտաւորութիւն
 ներնիդ յառաջ տանելու համար ար-
 ձակ ասպարէզ ունիք եղեր առջեւնիդ՝
 ժողովներուն ընտրութիւնները ձեր
 ձեռքն ըլլալով և ժողովներն ալ մէկ
 մէկ քանի հոգիի ձեռք . որով մութին
 մէջ ուզածնիդ կրնաք քալեցնել եղեր ,
 առանց հասարակութիւնը իմանալու .
 վասն զի նոյն իսկ կղերն ալ ձեր ձեռքը
 գործիք մ'ըրած էք եղեր : — Հիմայ ա-
 սնք դիտնալով կարծե՛ք թէ Տէրու-
 թիւնը Ազգէն աւելի պիտի խնդրէ , որ

Սահմանադրութիւնը իր կողմէն վաւերացած օրէնք մ'ըլլայ, որուն դէմ անկարելի ըլլայ ձեզի ապստամբիլ :

Ազգին լուսաւորեալ մասը մատնեցիք իբրեւ յեղափոխական և Տէրութեան մնասակար, և արդէն ձեր ինչ ոգիի ծառայելը յայտնի եղաւ և դատերնիդ տեսնուած է հասարակաց կարծեաց առջեւ, և եթէ ինչպէս յոյս ունինք, օրինաւոր քննութիւնն ըլլայ Տէրութեան ձեռքով՝ ձեր գործել ուզած յեղափոխութիւնը և հասուցած մնասները յայտ յանդիման պիտի խայտառակին Տէրութեան առջեւ ալ :

Լուսաւորեալ մասին մէջ մէկ քանի պատուաւոր անձիք, որ ձեզի պէս հազար կ'արժեն և անոնց մէջ Աղաթօնի պէս մարդը, որ գիշեր ցերեկ աննկուն արիութեամբ կ'աշխատի Ազգին համար այսքան տարիներէ 'ի վեր, անխղճաբար ու վատաբար գնացիք Տեսչութեան մատնեցիք : Բայց հարցուփորձը ուրիշ բանի չըծառայեց եթէ ոչ ձեր յանցանքները երեւան հանել լու և 'ի դիր արձանագրելու : Արձա

նագրու թիւնները պահւած են, գընացէք կարգացէք :

Վերջապէս զԱզգը բոլոր մասնեցիք իբրեւ էփեպիղ (ձեր Պատրիարքին բերնէն ելած խօսքն է) և լսողը երեսնիդ թքաւ, անպիտաններ :

Բայց սա ալ չբնուանք, որ օրագիրները մասնեցիք ու յաջողեցաք : Ա՛հ, այդ յաջողութիւնը, որ ձեր արդիւնքն ալ չ'է, կրնաք վրան խնդալ : Բայց ետքը չողջաք : Անձրեւէն փախչողը կարկուտի պիտի բռնըվի :

Եւ դարձեալ ըսենք թէ յաջողէիք ձեր ամեն ջանքերուն մէջ և ըսենք թէ յաջողիք ասկէ ետքը, ի՞նչ պիտի անցնի ձեռքերնիդ : Գիտէք, թշուառականներ, որո՞ւ դէմ կը պատերազմիք կոր — Մեզուն գոցեցիք, պիծակը կ'եղնէ դէմերնիդ, օրագիրները վերուցիք, տետրակներ կը տեղան գլխունսդ, Թոպագրութիւնը Պօլիսէն արտաքսեցիք, դուրսէն կ'ըսեսի հորդան տալ ՚ի Պօլիս, լուսաւորեալները բոլոր սքսորեցիք, բանտարկեցիք, ջընջեցիք, անհետ ըրիք աշխարհիս երեսէն,

վաղը հազարներով պիտի ելնեն դըպ-
րոցներէն ու ձեր զաւկրները ձեզի
գէմ պիտի նարագեն լուսաւորեալի և
խաւարեալի կռիւները . այն ատենը
ի՛նչ պիտի ընէք — Այն ատեն պիտի
ըսէք . օրագիրները վերուցինք՝ օգուտ
մը չ'եղաւ , լուսաւորեալները քէցցինք՝
օգուտ մը չ'եղաւ . դպրոցները գոցե-
լաւ է պիտի ըսէք այն ատեն և պիտի
տեսնէք , որ ձեր քայլերուն վրայ , ձեր
բոլորտիքը , ամեն տեղ դպրոցներ վար-
ժարաններ բացվեր են . Հռովմէակա-
նայ վարժարաններ , Բողոքականաց
վարժարաններ և զանոնք չըպիտի կրնայք
գոցել . և այն ատեն Բանդիմալը վերցը-
նելու պիտի աշխատիք , որ ասոնց առ-
ջեւն առնէք ու եե՛նիչէրիո՛ւնը նորո-
գէք Օսմանեան հողին վրայ : Հէ՛ , ի՛նչ
կ'ըսէք ասոր . ասի գեղեցիկ բան է ,
հրապուրիչ բան :

Բայց պիտի կրնայք մի ընել . ու-
ժերնիդ պիտի օգտէ՞ մի :

Գ.

Մարդկութիւնն սաւալ չըպիտի երթայ ք-
տող անմիտ մարդերուն Աստուած ՚ի սրա-
տատիան՝ զերկիր կը սարսէ :

Վ Ի Բ Թ Օ Ո Ւ - Հ Ի Ի Կ Օ

Ի նու թեան օրէնքին գէմ մաքառիլ
անկարելի է և յառաջդիմու թիւնը բը-
նու թեան օրէնք մըն է, որ պէտք է
կատարվի : Եւ յա դարուս մէջ, այս 19^ր
մեծ դարուն մէջ անշարժ կենսալն ան-
հնար է. ամեն ազգ կը շարժի, կը գոր-
ծէ, կ'աշխատի, կը լուսաւորվի. և ով
որ աւելի լուսաւորեալ է՝ անի աւելի
ազգեցութիւն ու զօրութիւն կ'ըստա-
նայ. և ով որ ետ կը մնայ, չ'ուզեր
շարժիլ, չ'ուզեր գործել, չ'ուզեր աշ-
խատիլ, անի իբրեւ անպիտան անդամ՝
հին Սպարտացւոց մէջ եղածին պէս,
մարդկային ընկերութենէն դուրս կը
նետովի :

Եւ թէ մեր Ազգն ալ չ'ուզէ սթա-
փիլ ու ետ ետ երթայ, մինչդեռ ու-

րիչները յառաջ կ'երթան՝ իր գիտնալու բանն է . ըսել է որ մահն աչք առած է : Եղևկ իրեն . եղևկ իր սրբազան հայրերուն ու նախնիքներուն աշտութեանցը , եղևկ իր պատմական աւանդութեանցը , եղևկ մեզի , որ մեր կորստեամբը զինքը փրկելու չափ յօժարակամ գանձովեցանք :

Այս միջոցիս , որ Ազգին մէջ մեծ ընդդիմահարութիւն մը կայ , ուր երկու կողմ իրարու դէմ՝ մէկը յանուն լուսաւորութեան և միւսը յանուն Եգիպտական խաւարին կը մարանչին , այս հանդիսաւոր վայրկենին , ուր կենաց և մահու խնդիրը կը ծեծվի Ազգին մէջ , դուք , ո՛վ Հարք Հայաստանեայց , ձեր երկնային բարձրութենէն աչք մը նետեցէք Ազգին սա վիճակին վրայ , և ձեր յետամնայ որդւոցը իղձերուն , կիրքերուն ու ատելութեանը վկայ եղէք : Եթէ մեր ձեռքերը Ազգին այդին քակտելու փորձ կը փորձեն , մենք աւմենքս ալ կռնձի՛նք , ՚ի չիք դառնանք : Իսկ եթէ մեր հակառակորդները մեր շինածն աւրելու ելեր են , բարեխօսե-

ցէք անոնց համար, որ գան միանան
մեզի հետ, ու ձեր քրտինքովն ուս-
գեալ այգին ստղաբերելու օգնեն մե-
զի: Այն յառաջգիմութիւնն որ մէկ
քանի տարուան մէջ ըրաւ Աղգը և որ
իր անունը այնքան սիրելի սկըսաւ ը-
նել ամենուն, չենք ըսեր թէ մեր ար-
դիւնքն է բոլորովին անի, բայց ձեռ-
քերնիս խղճմտանքնուս վրայ դնելով
ձեր սրբազան ոգիներուն առջեւ կըր-
նանք վկայել թէ այն յառաջգիմու-
թեան սպասարկուն եղանք անընդհատ
քսան տարիէ ՚ի վեր և անոր համար ա-
մենայն ինչ զօհեցինք:

Չեր սուրբ հոգիները վկայ թող
ըլլան դարձեալ, որ մինչեւ մեր վեր-
ջին շունչը պիտի աշխատինք ասոր հա-
մար:

Իսկեթէ տակաւին ընդգիմութիւն-
ներ գտնենք ձեր միւս որդւոցմէն, որ
ձեր սուրբ յիշատակէն ալ չըպատկա-
ռելով ինքզինքնին խաւարեալ կը կու-
չեն, եթէ այս պատերազմը, այս վայ-
րենի պատերազմը պիտի քչեն տակա-
ւին մեզի հետ, կ'ընդունինք իրենց

Տեա պատերազմից թեպէտ ցաւօք
սրտի ու կը պատերազմինք մինչեւ որ
նետահար իյնանք դաշտին վրայ :


Ապագայ սերունդները թող մեզ
դատեն :

1861 Սեպտեմբեր 2

Ի Դիմաց լուսաւորիաւ Հայոց

Յ. Գ. ՍԱԳԱՃԵԱՆ

6981





ՀՀ Ազգային գրադարան



NL0333837

